ԱՍԵՆՔ ՇՆՈՐՀԱՎՈՐ...

Արդեն ավանդույթ է դարձել մեր շաբաթաթերթում անդրադառնալ համայնքի հավատացյալների կյանքի կարևորագույն իրադարձություններին և շնորհավորանքի ջերմ մաղթանքներ հղել այն ընտանիքներին, ովքեր արժանացել են Սուրբ Խորհուրդներին:

Նախորդ ամիսների ընթացքում տեղի են ունեցել հետևյալ ուրախությունները՝

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ	ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Օգոստոս	
Հակոբյան Ռուսլան	Հակոբյան Հովսեփ և Առաքելյան Էլմիրա
Հակոբյան Արման	Աբրահամյան Վլադիմիր և Նահապետյան Սրբուհի
Առաքելյան Բենիամին	
Առաքելյան Եկատերինա	
Ավետիսով Տիգրան	
Սեպտեմբեր	
Կարլսյան Գայանե	Միքայելյան Կարեն և Թորոսյան Ալլա
Ղազարյան Ռիմա	Շիրինյան Արման և Կարլսյան Գայանե
	Սիմոնյան Խաչատուր և Թորոսյան Աննա
	Ղևենյան Սերգեյ և Սարգսյան Անահիտ
Հոկտեմբեր	
Սարգսյան Արաքսյա	Օքրոյան Նիկողոս և Հովհաննիսյան Մալվինա
Պապիկյան Էլինա	
Նոյեմբեր	
Օքրոյան Հովսեփ	Օքրոյան Ստեփան և Սարգսյան Արաքսյա

Շնորհավորում ենք և Աստծո օրհնությունը խնդրում մեր սիրելի հայրենակիցների համար:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1Եփեսացիներին 1 , 1-14

1 Պողոսը՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստծու կամքով,
Եփեսոսում եղած սրբերին եւ հաւատացեալներին ի
Քրիստոս.[2]շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր
Յիսուս Քրիստոսից։ [3]Օրհնեալ է Աստուած եւ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը, որ օրհնեց մեզ ի Քրիստոս ամենայն հոգեւոր
օրհնութեամբ, երկնային աշխարհում. [4]նա ընտրեց մեզ Քրիստոսի
միջոցով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ
անարատ լինենք նրա առաջ սիրով։ [5]Նախասահմանեց մեզ
որդեգրութեան Յիսուս Քրիստոսի միջոցով, ըստ իր կամքի
հաճութեան։ [6]Գովենք նրան այն փառքի համար, որով
երջանկացրեց մեզ իր Սիրելիով:[7]Նրանո՛վ է, որ ունենք փրկութիւն,
նրա արեան միջոցով՝ մեղքերի թողութիւն, ըստ իր շնորհի
մեծութեան չափի, [8]որ եւ առատացաւ մեր մէջ ամենայն
իմաստութեամբ եւ գիտութեամբ։ [9]Ճանաչեցրեց մեզ, ինչպէս հաճելի
էր իրեն, իր կամքի խորհուրդները. նա դրանք նախապէս
սահմանած էր Նրանով, [10]որպէսզի, ժամանակների լրումին, ինչ որ
երկնքում է եւ ինչ որ երկրի վրայ, ամէն ինչ Քրիստոսով
բովանդակուի։ [11]Նրանով է, որ ժառանգեցինք մեզ վիճակուած
բաժինը, ըստ առաջադրութեան Աստծու, որ ամէն ինչ յաջողեցնում
է իր կամքի խորհուրդների համաձայն. [12]մենք՝ նախապէս
Քրիստոսին յուսացողներս, նախասահմանուած եղանք գովելու
նրա փառքը։ [13]Նրանով է, որ դուք էլ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝
ձեր փրկութեան Աւետարանը, որին հաւատալով կնքուեցիք
խոստացուած Սուրբ Հոգով, [14]որ մեր ժառանգութեան
առհաւատչեան է մինչեւ այն օրը, երբ կատարելապէս կը
տիրանանք փրկութեանը՝ ի գովութիւն նրա փառքի։

Ղուկասի Ավետարան 8, 17-21

17Ծածուկ ոչինչ չկայ, որ չյայտնուի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի եւ ի յայտ չգայ։ 18Այսուհետեւ զգո՛յշ եղէք, թէ ինչպէս էք դուք լսում. որովհետեւ ով որ ունի, նրան կը տրուի, իսկ ով որ չունի, եւ այն, ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից» 19Նրա մօտ եկան իր մայրն ու եղբայրները եւ չէին կարողանում նրան մօտենալ բազմութեան պատճառով։ 20Իմաց տուին նրան եւ ասացին. «Քո մայրը եւ քո եղբայրները դրսում կանգնել են եւ ուզում են քեզ տեսնել»։ 21Եւ նրանց ասաց. «Իմ մայրը եւ եղբայրները սրանք են, որ Աստծու խօսքը լսում են եւ կատարում»։

Մեր կյանքի վերջում չենք դատվելու՝ ըստ այն բանի, թե քանի դիպլոմ ենք ստացել, որքան գումար ենք հայթայթել կամ ինչքան մեծ գործեր ենք կատարել: Այլ դատվելու ենք՝ ըստ «Քաղցած էի, և ինձ կերակրեցիք, մերկ էի, և ինձ հագցրիք, անտուն էի, և ինձ ընդունեցիք»:

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ

Ах, болит сердце,
И капает кровь
В ведро бездонное,
Под названием "любовь".
И вдруг кажется,
За дни мгновений, утратила
Свою былую силу капля чувств.
Но нет, увы за короткий хлоп ресниц
Каплю сменит река крови.
И вот... снова... я прокрутил
Момент касаний наших,
Вы робким голосом сказали:
"Подожди".
Я встал столбом, как послушный певец.
я потерял свое упрямство, как воду
Теряет ведро со дном.
И вы ловким движением руки,
Только лишь поправили
Воротничок.
А ведь душа хотела другое,
А ведь сердце хочет поцелуй

Патрик. Москва 2014.



***

Ты мой герой
И вдруг она сказала:
"Ты мой герой".
Герой моей души и сердце.
Герой храбрых наших наречий.
Герой нашей свирепой любви.
Но вот свинец подлости и лжи
С клинком гордости.
Заставили нырнуть мне
В эту пропасть "любви".
Но я, как крылатый Серафим.
Поднялся на долину счастья антилоп
И я стоял гордой головой
Чтобы искусить нектар порока.
Ведь я прошел испытание "любви".
Ведь не избавить себя от порока
жизни – любви

Патрик. Москва 2014

Оборону на этом участке возглавлял Грайр (А. Казарян). В селе Тапык расположился отряд под командованием Андраника, имевший задачу воспрепятствовать продвижению противника на Гелиегузан. Силы, оборонявшие Ишханадзор и Талворик, возглавлял Геворг Чавуш, а район, называемый Чайи глух, обороняли отряды, которыми командовали Акоп Котоян, Мурад Себастаци и Макар Спаганци. В начале апреля произошли бои у села Шеник, в ходе которых турки понесли значительные потери. После этого турецкое командование предложило армянам прекратить сопротивление. В ответ на это предложение сасунцы потребовали заверения в том, что турецкие власти осуществят программу реформ в Западной Армении (см. «Майские реформы» 1895). Бои возобновились, 14— 15 апреля армяне вынудили противника отступить в районе села Меркер. Турецкие войска стали обстреливать позиции армян, из артиллерии, нанеся большой ущерб. Защитники Сасуна и 20 тыс. безоружных жителей сосредоточились в Гелиегузане. 17 апреля турки атаковали позиции армян в этом районе, но были отбиты. Два дня спустя, под прикрытием артиллерийского огня, турки предприняли новую атаку. После нескольких дней героического сопротивления армяне, исчерпав запасы боеприпасов, покинули Гелиегузан и отступили к высотам Алучака. Безоружное население спустилось на Мушскую равнину, а бойцы продолжали оказывать сопротивление до 14 мая. Турецкие погромщики вырезали около 8 тыс. армян, разорили и ограбили много армянских сел. Героическая самооборона сасунцев и вмешательство великих держав вынудили султанское правительство отказаться от уничтожения армян Сасуна. Сасунская самооборона 1904 стала славной страницей истории национально-освободительной борьбы армянского народа.

Андрани́к Торо́сович Озаня́н *один из лидеров армянского на ционально-освободительного движения конца XIX — начала XX веков, национальный герой армянского народа. Также известен как Полководец Андраник (арм. Զորավար Անդրանիկ, Зоравар Андраник).*

(http://www.fedayi.ru/)

Նյութը պատրաստեց Մինաս Մովսեսյանը

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԸ

«Իմ մայրը և եղբայրները սրանք են, որ Աստծու խօսքը լսում են և կատարում» (Մատթ. 12. 46 -50, Մարկ. 3. 31 -35):

«Այսուհետև զգո՛յշ եղէք, թէ ինչպէս էք դուք լսում...» (Մարկ. 4. 21):

Մարմնի ճրագը աչքն է, հոգու ճրագը միտքն է, ամբողջ մարմինը առաջնորդվում է մտքի կողմից, որովհետև այն ամենն, ինչ խոսում և գործում ենք, նախ խորհում ենք, այնուհետև խոսում և գործում ենք: Այսինքն՝ ամեն ինչի առաջնորդողը միտքն է, և մեր ամբողջ կազմության լույսը միտքն է : Եվ եթե միտքը լուսավոր է, աստվածային պատվիրաններով կրթված, լուսավորված, քրիստոնեական կյանքի փորձությամբ իմաստնացած է, ապա կարողանում է հոգին, մարմինը, մարդկային ողջ կազմությունն առաջնորդել դեպի ճշմարտություն: Բայց միտքը միշտ գտնվում է բարու և չարի միջև և իրապես պետք է աստվածային հոգի ունենալ, որպեսզի ընտրենք բարին և մերժենք չարը: չարիք մի՛ գործիր, եւ քո վրայ չարիք չի գայ: *(Միրաք 7.7):*

Մարդուն երկու ունակություն է հատուկ՝ իմացական միտքն ու ազատ կամքը, որոնցո՛վ է նա մարդ: Մտքի գործը ճշմարտությունը ճանաչելն է և բարու ու չարի միջև ընտրություն կատարելը, իսկ կամքինը՝ չարից խորշելն ու ազատ բերումով բարին գործելը: *«Ո՛չ ոք ճրագ չի վառի և կաթսայի տակ չի թաքցնի կամ մահճի տակ չի դնի, այլ կը դնի աշտանակի վրայ, որպէսզի, ովքեր մտնեն, լոյսը տեսնեն»(Մարկ. 4.21 -25):*

«Արդարությունս նվազել է ու չքացել իսպառ. Մեղքերս բացվել են ու բազմապատկվել. Չարիքները իմ մնացական են, ես՝ կորստական. Թեթևացել է սաստիկ նժարը իրավունքներիս, Անիրավության կողմը՝ ծանրացել. Հալվել, ցնդել է բերքը բարիքիս, Իսկ սխալներս՝ հաստատվել ամուր. Ավանդը կորցրել, դատակնիքն եմ

գտել այժմեն իսկ. Բայց դու, միակ տեր Աստված մարդասեր, Ջնջի՛ր, ուրեմն, ու վերացրո՛ւ Դատապարտության կնիքն ինձանից, Որ կապված եմ քեզ տենչանքով հոգուս. Անհետացրու՛ այս ամոթալի Նախատինքները խայտառակության, Ծածկի՛ր մերկ մարմնիս տգեղությունը աջով քո կարող, Կարգի՛ր ինձ բարովք վերելքի ճամփա՝ կյանքիդ հասնելու, Որպես հիշատակ քո ողորմության.» (Սբ. Գրիգոր Նարեկացի)

Մարդը երկու վիճակ ունի, մեկը՝ այս կյանքինը, մյուսը՝ հանդերձյալինը:

Աստված, երբ ստեղծեց մարդուն, նրան անհրաժեշտ բոլոր բաները չափով, կշռով ու կարգով, շնորհեց և ամեն օր շնորհում է յուրաքանչյուրի օգտի համար: *«Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ և ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ, ի շինություն Քրիստոսի մարմնի»(Եփես.4.11-12):*

Այս երկիրն էլ, իբրև բարելից սեղան, զարդարեց մարդկանց վայելքի համար և ընդհանուր բարիքները՝ ամենքին միապես տվեց:

Իսկ մասնավոր բարիքները միայն Իրեն վերապահեց տալ նրան, ում կամենում է, որքան կամենում է, երբ կամենում է, և ինչպես կամենում է: *«որովհետև ով որ ունի, նրան կը տրուի, իսկ ով որ չունի, և այն, ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից»(Մարկ. 4. 21 -25):*

«Այսուհետև զգո՛յշ եղէք, չկայ ոչինչ ծածուկ բան, որ չայտնուի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի և ի յայտ չգայ»(Մարկ. 4. 21 -25) :

Որդեա՛կ, եթէ նուիրուում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձութիւնների պատրաստիր*(Միրաք 2.2):*

Ծ. Վարդապետ Հայր Պետրոս Պետրոսյան

Մոսկվա, 2 նոյեմբերի 2014թ

Здесь сасунцы были окружены превосходящими силами врага и перебиты. Женщины, сражавшиеся бок о бок с мужчинами, чтобы не попасть в руки врага, бросались со скал в пропасти. В боях погибли многие герои освободительной борьбы, в т. ч. Грго (Г. Мосеян).Был пленен и закованным доставлен в Муш Геворг Чавуш. Турецкие войска, продолжая наступление, разорили около 40 армянских сел Сасуна, вырезав их беззащитное население (свыше 10 тыс. человек). События 1894 в Сасуне получили широкий международный резонанс. Прогрессивные общественные деятели ряда стран выступили в защиту сасунцев. Резня в Сасуне побудила правительства Великобритании, Франции и России представить турецкий правительству программу проведения в Западной Армении реформ (см. «Майские реформы.» 1895), предусмотренных Берлинским конгрессом 1878. Сасунская резня 1894 была началом массовых погромов армян в Турции в конце XIX в.

Геворк Чавуш

САСУНСКАЯ САМООБОРОНА 1904 Г.

Оборонительные бои армян Сасуна против турецких погромщиков, ставящих целью уничтожить армянское население этой местности. Весной 1904 курдские силы совершили нападение на армянские села Хианк и Хулб, но были отброшены армянами, уже имевшими опыт самообороны (см. Сасунская самооборона 1894). После этого 10-ти тыс. турецкие и 5-ти тыс. курдское войско под командованием Кёсе бинбаши развернуло наступление на Сасун через села Кеп, Семал, Хызылагач, вступило в Алианк и Шеник.

Оказавшие сопротивление убийцам
Восстание Обреченных

САСУНСКАЯ САМООБОРОНА 1894 Г.

Оборонительные бои армян Сасуна против турецкого деспотизма. В 90-х гг. XIX в. турецкие власти приняли решение покончить с полунезависимым положением армян Сасуна. Для того, чтобы иметь повод для совершения похода на Сасун, турецкое правительство инспирировало армяно-курдские столкновения. В 1891—93 сасунцы несколько раз отразили нападения на Сасун регулярных турецких войск и примкнувшего к ним сброда. В 1894 турецкое правительство предприняло решительные действия для покорения Сасуна. Вокруг Сасуна была создана военная зона, сосредоточены войска. Общее руководство наступавшими на Сасун войсками было возложено на командующего 4-й Анатолийской армией Зеки пашу. В его распоряжении имелось 12 тыс. турецких солдат; сюда же были переброшены из Диарбекира пехотный корпус Осман паши (3 тыс. солдат), два конных полка из Ерзнка и Муша пехотный полк из Карина и другие силы, к которым присоединились несколько тысяч охочих до добычи турецких и курдских башибузуков. Для отражения врага сасунцы во главе с Амбарцумом Пояджяном (Мецн Мурад) подготовились к самообороне. Главный удар турки нанесли в июле с Сасуне — в районе сел Шеник и Семал, но, понеся значительные потери, отступили. В начале августа турки повторили атаку на том же направлении, но вновь были отбиты. 3 августа турецкие войска вторглись в Шатах; армяне, ведя упорные бои, отступили к Гелиегузану, затем к горе Андок. Превосходящие силы турок осадили гору и 13августа перешли в наступление. Армяне оказывали сопротивление до 27 августа, но вследствие того, что боеприпасы и продовольствие иссякли, отступили к высотам Кепина и ущельям Талворика.

Ընտանեկան դաստիարակության մասին

«Արդար չափով չափենք ու բաժանենք Երկնքի Հոր խնամքն ու ծնողների պարտականությունները: Արդ, երբ շունչն ու կյանքը Երկնքի Հորից է, սքանչելի պատկերն ու կերպարանքը՝ Երկնքի Հորից, արևը, անձրևը, հացն ու ջուրը՝ Երկնքի Հորից, հասակն ու աճումը՝ Երկնքի Հորից, այլևս ի՞նչ է բաժին մնում երկրավոր հորն ու մորը, եթե ոչ միայն դաստիարակությունը: Եվ ի՞նչ է ծնողական դաստիարակությունը. ուրիշ ոչինչ, այլ միայն կույր ծնված զավակների (մտավոր կուրության մասին է) աչքը դեպի բարին բանալը, սիրտն ու հոգին առաքինությամբ կրթելը, որպեսզի տեսնեն աշխարհն ու մարդկային կյանքը, լույսն ու խավարը որոշեն, բարին ու չարը ճանաչեն և ամենակարևորը Աստծուն ճանաչեն ու հավատան, կրոնն ու ճշմարտությունը ընդունեն» ...

Խրիմյան Հայրիկ «Դրախտի ընտանիք»

http://holytrinity.am/

ԽԱՉԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՏԸ

սկիզբը՝ նախորդ համարում

Երեք հարյուր տարի անց Հեղինե թագուհին՝ Կոստանդիանոս կայսեր մայրը, տեսիլքով Աստծուց հրաման է ստանում գնալ Երուսաղեմ, փնտրել ու գտնել Քրիստոսի Խաչափայտը և տնօրինական վայրերում տաճարներ կառուցել: Հեղինեն տեսիլքը պատմում է Կոստանդիանոսին և նրան հայտնում Աստծո հրամանը: Կայսրը հոժարությամբ ու մեծ հավատով ընդունում է մոր խոսքերը, միջոցներ է տրամադրում այդ գործն իրականացնելու համար և թագուհուն՝ մեծ շքախմբով ու բազում օգնականներով, ճանապարհում դեպի Երուսաղեմ: Թագուհին, գալով Երուսաղեմ, քաղաքը գտնում է ավերված ու թալանված, այնպես՝ ինչպես մարգարեացել էր Եսային. «Ձեր երկիրն ավերակ է, ձեր քաղաքները՝ հրո ճարակ, թշնամի ցեղերից ավերված ու ամայացած, ձեր հողի բարիքները ձեր իսկ աչքի առաջ օտարներն են ուտում: Սիոնի դուստր Երուսաղեմը պիտի մնա լքված, ինչպես տաղավարը՝ այգում, մրգապահների հյուղակ՝ սեխի պարտեզում, ինչպես պաշարման մեջ գտնվող քաղաքը» (Եսայ. 1:7-8): Երբ 70թ. հռոմեական զորքերն ավերեցին Երուսաղեմը և հիմնահատակ քանդեցին տաճարը, սովից ու պատերազմներից մեկ միլիոնից ավելի հրեաներ կոտորվեցին, իսկ մնացածն էլ գերվեցին և ցրվեցին աշխարհով մեկ: Այդ օրերին Երուսաղեմն արդեն չուներ իր նախկին փառքը: Բացի այդ 64 թվականից սկսած մինչև 313 թվականը՝ մինչև Կոստանդիանոս Մեծի գահակալության երկրորդ տարին, Քրիստոսի Եկեղեցին մեծ հալածանքների ենթարկվեց: Հրեաներն ու հեթանոսները, չհանդուրժելով քրիստոնյաների մատուցած պաշտամունքը Խաչյալին, ամեն կերպ ցանկանում էին աշխարհի երեսից վերացնել Տիրոջ փառքը հիշեցնող ամեն ինչ, որպեսզի դրանով իսպառ ջնջեն Նրա հիշատակը: Այդ պատճառով էլ նրանք թաքցրեցին Տիրոջ Խաչափայտը՝ ավազակների երկու խաչափայտերի հետ միասին թաղելով այն հողում, և այդ տեղում կառուցեցին հեթանոսական կռատուն:

Այդ օրերին Երուսաղեմում միայն Հուդա անունով մեկը գիտեր խաչի գտնվելու վայրը, ինչին տեղյակ էր իր նախնիների գրավոր ավանդություններից:

Սակայն նա չէր ցանկանում հայտնել և թագուհու խնդրանքներին ու հորդորներին անտարբեր է մնում, մինչև որ թագուհին ճարահատյալ բանտարկում է նրան: Հուդան վեց օր առանց հացի մնալով մի ցամաքած ջրհորի հատակում՝ ի վերջո հայտնում է խաչափայտի տեղը, և թագուհին ձեռնարկում է խաչափայտի որոնումները Գողգոթայի վրա: Խաչափայտը բավականին խորն էր թաղված հողի տակ, ինչը մեծ աշխատանք և շատ ժամանակ էր պահանջում որոնողներից: Սակայն Աստծո շնորհով թագուհին գտնում է երեք խաչափայտներն էլ և անգամ՝ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը:

Գտնելով խաչափայտը՝ թագուհին տրտմում է, քանի որ չի կարողանում զանազանել, թե այդ երեք խաչափայտերից որն էր տերունականը: Սակայն Երուսաղեմի պատրիարք Մակարիոս եպիսկոպոսը հավատով լուծում է այդ խնդիրը և փարատում թագուհու տրտմությունը: Նա աղոթքով Աստծուց նշան է խնդրում՝ ցույց տալու, թե որն է Սուրբ Խաչը: Եվ հրաշքը չի ուշանում: Մի կին երկարատև հիվանդությունից հետո մահամերձ վիճակում է լինում: Մակարիոս եպիսկոպոսը հավատում էր, թե Տիրոջ խաչը, որի վրա թափվել է Նրա Արյունը, կառողջացնի այդ կնոջը, եթե նրան մոտեցնեն Խաչափայտին:

Առաջին երկու խաչերը, որոնք ավազակներինն էին, կնոջը ոչ մի օգուտ չեն տալիս, սակայն երբ նրան հպում են Տիրոջ Խաչին, կինը լիովին առողջանում է, ոտքի կանգնում և Աստծուն փառք տալիս: Այնուհետև այդ Խաչի միջոցով, որով Տերը հաղթեց մահին և ավերեց դժոխքը, հարություն առավ մի պատանի, և էլի բազում հրաշքներ կատարվեցին, ինչը տեսնելով՝ շատ հրեաներ դարձի եկան ու մկրտվեցին: Հուդան էլ, ով ցույց էր տվել խաչափայտի գտնվելու տեղը, իր ցեղակիցների հետ մկրտվեց և անվանվեց Կյուրեղ**, մեծ շնորհների արժանացավ ու հասավ եպիսկոպոսի աստիճանի: Հետագայում նա Տիրոջ անվան համար նահատակվեց՝ արժանանալով մարտիրոսական պսակի:

** Ենթադրվում է, որ խաչափայտը գտնվել է 327 թ.-ին:*

*** Սա այն Կյուրեղն է, ում հիշատակում ենք Մեծի պահոց երկրորդ շաբաթ օրը, և տոնացույցում նա անվանվում է «մյուս Կյուրեղ», որպեսզի չշփոթենք Կյուրեղ Երուսաղեմացու հետ:*